ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-21/49 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային տեխնիկայի (համակարգիչներ և բազմաֆունկցիոնալ տպիչ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 27.10.2021թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

ք. Երևան 27.10.2021թ. ժ.15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Հարություն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ	karenarmeps@gmail.com

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	1200000	1200000	1200000
2	2400000	2550000	2550000*
3	1020000	1100000	1100000*
4	425300	-	-

* Գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

4. Հակադարձ աճուրդի արդյունքում, յուրաքանչյուր չափաբաժնի մասով, համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4.2 **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ** -ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.3 **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ**-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

4.3.1 «Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ -ի կողմից համակարգով ներկայացված Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մասնակցի իրական շահառուների մասին աղյուսակը լրացված չէ,

4.3.2 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում կոնկրետ նշված չեն առաջարկվող համակարգչի ֆիրման, իսկ տեխնիկական բնութագրում՝ էկրանի չափը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.3 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021թ նոյեմբերի 1-ին, ժամը 15:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 01.11.2021թ. ժամը 15:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Հարություն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ**-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել.

1-ին չափաբաժինների մասով՝ **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ**–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 **«Կարեն Ալոյան Էդուարդի» ԱՁ-ի** հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մերժվել է համակագի կողմից համաձայն 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հրապարակել 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Հարություն Մուշեղյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/